




Տարեկան գինը 10 ռուբլ, կէս տարեկանը 6 ռուբլ:
Առանձին համարները 7 կոպէկով:

Թիֆլիսում գրվում են միմյան խմբագրատան մէջ:

Մեր հասցեն. Тифлисъ. Редакция «Мшакъ».
կամ Tiflis. Rédaction «Mschak».

Խմբագրութիւնը բաց է առաւօտեան 10—2 ժամ
(Բացի կիրակի և տոն օրերէն):

Յայտարարութիւն ընդունվում է ամեն լեզուով:

Յայտարարութիւնները համար վճարում են
խաւքանչիւր բառին 2 կոպէկ:

ԵԿՈՂ 1889 ԹԻԻՆ

ՄՇԱԿ

ԴՐԱՅԻՆԱԿԱՆ ԵՒ ՔԱՂԱՔԱԿԱՆ ԼՐԱԳԻՐ

Կը հրատարակվի Թիֆլիսում, նոյն գիւղերով և նոյն պրոգրամայով Մեր կը ստանանք սեփական ՀԵՌԱԳԻՐՆԵՐ:
«ՄՇԱԿ» տարեկան գինը 10 ռուբլ է, կէս տարեկանը 6 ռուբլ:
Գրվել «ՄՇԱԿ» կարելի է ՌԻՍԿԱԳՐԱՍՆԵՐ (Բարձրակարգ և Բարձրակարգ փողոցների անկիւնում Թամարայի տանը):
Կայտարարութեան ուրիշ քաղաքներէն «ՄՇԱԿ» գրվելու համար պէտք է դիմել հետևեալ հասցեով. ТИФЛИСЪ, Редакция газеты «МШАКЪ», իսկ արտասահմանից. Tiflis, Rédaction du journal arménien «MSCHAK».

Խմբագիր-հրատարակող ԳԻՐԳՈՐ ԱՐՇՈՒՆԻՆԻ

ԲՈՎԱՆԳԱՅԻՆՈՒԹԻՒՆ

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ. Կովկասի ներկայ վաճառականութիւնը. Գաւազները և հրապարակական թերթերը. Նամակ Սեփաստօլովից. Ներքին լուրեր. —ԱՐՏԱԲԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ. Պանդուխտ հայերը Յունաստանում. Արտաքին լուրեր. —ՀԵՌԱԳԻՐՆԵՐ. — ԲՈՐՍԱ. — ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ. — ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ. Արեւ գաւառի մի քանի գիւղեր:

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ԿՈՎԿԱՍԻ ՆԵՐԿԱՅ ԿԱՃԱՌԱԿԱՆՈՒԹԻՒՆԸ

Շատ յարմար ժամանակ է այժմ խօսել ներկայ վաճառականութեան մասին և ուղարկութիւն դարձնել այն սարսափելի տագնապին, որին ենթարկված է և պիտի ենթարկվի մեր երկրի վաճառականութիւնը: Ինչպէս է առաջանում այդ տագնապը և ինչ միջոցով պիտի առաջն առնել այդ ճգնաժամի շարունակվելուն:

ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

ԱՐԷՏ ԳԱՆՈՒՄԻ ՄԻ ՔԱՆԻ ԳԻՒԼԵՐ

Հաւարկում, Գեանդակում, Մաղրջում բեգերի հողերը չը կան. բաւականանում են տէրունական հողի մշակութեամբ, որը բաւարարութիւն չէ տալիս. Ժողովրդի մեծագոյն մասը ստիպված այս ու այն կողմը մշակութեան է գնում: Եթէ այդ աշխուժութիւնը ուղիղ հոսանք գնալը չը լինի, ինչպէս ասում են իրանը, քաղցած պիտի մեռնեն...:

Հնձոդները վարձատրութեան պայմանները գաւառներ են լինում. այս զանազանութիւնը սահմանափակվում է հոնձի առատութեամբ կամ սակաւութեամբ, և կամ հնձոդների քանակութեամբ: Սովորաբար 20 շուալից 4-ը վարձկան հնձոդ է վերցնում, իսկ եթէ խուրձերով են հաշուում՝ 4-ից մէկը:

Վերջապէս, այսպէս թէ այնպէս, յիշեալ գիւղերի եկամուտը ծախսին և պիտոյքներին չէ հաւասարակշռում: Առանց մանրամասնութեան մէջ մտնելու, շատանալը այն իրողութիւններով, որ բնակիչները մեծագոյն մասը ընթացիկ տարվայ անհրաժեշտ ծախսերը հողաւոր համար պարտք է վերցնում, յաջորդ տարվայ եկամտից վճարելու պայմանով. և այդ պարբերաբար շարունակվում է:

Նախընթաց տարվայ վերցրած պարտքը, որ սովորաբար 20—30—50 ռուբլու է հասնում, յաջորդ տարում վճարելուց յետոյ՝ դարձեալ ստիպված են լինում նոյն տարվայ ծախսերի համար

Այսօր, ամեն տեղ, թէ քաղաքում և թէ լրագրութեան մէջ մեր կովկասի ամբողջ առևտրական դասակարգը զանգառվում է իր վիճակի մասին, գործերի անշարժութեան և անշահաւորութեան մասին:

Իրաւ, երբ տեսնում են որ և է վաճառականին իր խանութի կամ գրասենեակի մէջ նստած, ներկայացնում են լեզու մի դժբաղդ սգաւորին, որը կորցրել է իր սիրելիին. մասնաւոր այդ սուգը, յուզմունքը և տրտմութիւնը շատ նկատելի է լինում, երբ որ վաճառականը միւս օրը մուրհակ ունի վճարելու:

Մեր այժման վաճառականները զանգառվելով իրանց ներկայ վիճակի մասին, ասում են որ առաջվայ ժամանակները գործերը աւելի լաւ և շահաւէտ են եղել քան թէ այժմ: Սակայն եթէ քննելու լինենք այդ խօսքերը, կը համոզվենք որ առաջ մեր վաճառականները ապրել են և աշխատել են ուրիշ հաշուով, առանց գիտակցութեան, առանց խոր կեցողով ուսումնասիրած լինելու վաճառականութեան իսկական պէտքերն ու պայ-

նորից պարտք վերցնել, վերոյիշեալ պայմանով երբեմն զանազան անաղուղիութիւններ պատճառով նախընթաց տարվայ պարտքը ամբողջապէս չը վճարվելով՝ կրկնապատկւում է:

Պարտք վերցնում են՝ օրինաւոր մուրհակով տեղացի մի քանի առևտրականներից, սովորաբար 20%-ով, բայց յաճախ պատահում է 30%-60% էլ է բարձրանում. այսպիսի դեպքերի պատճառեցաւ Հաւարկում և Գեանդակում վերցրած պարտքը վճարվում է բերքերով: Բոժոժի կամ կալի ժամանակ պարտատէրերը գնում պահանջում են: Շատ անգամ միջոց չեն տալիս, որ գոնէ տանեն քաղաք՝ ծախեն, փողը տան, այլ տեղային գնելով, մինչև անգամ յայտնի զիջումներով, գնելու են վերցնում բերքը: Թէկուզ անգամ զրկանք էլ ունենայ պարտապանը, այնու ամենայնիւ ստիպված է համաձայնվել ընդդիմադրել անկարող է, քանի որ կախումն ունի նրանցից, նրանց օգնութեամբ միշտ կարօտ է...:

Եւ յիշեալ, այդ տղու էլ ներքին և արտաքին յարաբեր են վայելում ժողովրդի մէջ...:

Ժողովրդի ապրուստը շատ խղճալի է. միակ կերակուրը կաթնեղէնն է—այն էլ ոչ բոլոր եղանակներով. միս ամիրներով չեն ուտում: Ինչպէս հաւատացնում էին, կան յայտնի ընտանիքներ, որոնք տարեկան մի երկու անգամ հազվեթէ թաթախում են մանղէնով. պատճառը ակներբն է...:

Միս և այլ կենսական պիտոյքները հոգացվում են ընդհանուր քաղաքում, որը շաբաթը մի անգամ է տեղի ունենում: Այսպիսի կենտրոնական քաղաքներում—որոնք ամբողջ Նովոսու և Արեւի գաւառներում մի քանի հատ են, կարելի է ամենայն ինչ ձեռք բերել և ծախսել:

Առողջակազմութեան վերաբերեալ, զգալի տարբերութիւն կայ տղամարդկանց ու կանանց մէջ:

մանները: Առաջ մեր վաճառականները հարստանում էին զանազան մակ և խաւար միջոցներով: Վաճառականը, որը առաջ, ասում եմ, ապրել է ուրիշի հաշուով, ճշմարիտ որ մի ժամանակ մեծ դեր է եղել խաղալիս, օգտվելով երկրի ճանապարհների անյարմարութիւնից և հաղորդակցութեան պակասութիւններից: Այդ թաւակներում վաճառականը բերելիս է եղել ապրանքը, որովհետեւ երկրի անհարմարութիւնները, որպիսիներ եղել են Գաղստանի լեռնաբնակների դէմ տարիներով մղված պատերազմը, Թիւրքիայի և Պարսկաստանի դէմ եղած պատերազմները և վերջին ևս—տաճկական պատերազմը, որոնց պատճառով մեզանում պահվելիս է եղել մեծաքանակ զօրք ու թափվելիս է եղել մեզ մօտ հեռու հիւսիսից՝ հազարաւոր պոռթկում ուսկի Վաճառականը զոհվելով այս հանգամանքների մէջ, օգտվել է, ինչպէս ասեցի, ամեն բան մէկը երկուսով ծախելով, կամ տէրութեան կապալ է վերցրել, և օգտվել է այդ կապալներից, այլ և այլ խաղալիս խաղալիս միջոցով:

Մինչև մաքսերի աւելացնելը և ներքին արդիւնաբերութեան մրցումը եւրոպականի հետ, նա բնութագրում էր ապրանքը եւրոպայից և գիտէր դրանից օգտվելու թեթիւ միջոցը. նոյնպէս օգտվում էր մինչև կովկասեան տրանսիտի փակվելը: Այդպիսով վաճառականը գտնում էր ամեն բանում իր նամար շահանքը կողմեր և կարողանում էր հարստանալ ու առաջն առնել ամեն տեսակ արգելքներին և անյարմարութիւններին:

Վերջապէս կանոնաւոր թէ անկանոն, յարգելի թէ պակաս յարգելի միջոցներով, ինչ որ արել է մեր վաճառականը, նա վաճառական ու թիւնը այդպէս է եղել հասկանալիս: Չնայ բերել փող, ինչ միջոցով էլ լինի, դա է եղել մեր վաճառականի նշանաբանը: Նա իր վաճառականութիւնը միայն հասկանում էր այնպէս որ մէկից

Տղամարդիկ նիհար, անաւոռլ և դանդաղկոտ են, քան թէ կանայք. վերջիններս իրանց աշխուժութեամբ և կանոնաւոր կազմակերպում ուղարկութիւն են գրաւում. բացի ընտանեկան զբաղմունքից, գործում են կապերով, ջուրով, վերմակի մետաքսայ երեսներ և այլն: Սովորաբար ամենայն մարդ իր համար է պատրաստում. սակաւ է պատահում, որ այդ գործունեներից ծախելու համար էլ պատրաստեն: Տղամարդկանցից 70—80 տարեկան հասակ ունեցող շատ քիչ կայ, այն ինչ կանանցից 90—100 տարեկան հասակ ունեցողներն էլ կան: Թէ ծերունի և թէ պառաւ իրանք իրանց տարիքը չը գիտեն. հաշիւ կարելի է լինում խանութի արշաւանների ժամանակներից, թէ այս ինչ խանի ժամանակ կամ այս ինչ պատերազմին քանի տարեկան կը լինէր և այլն: Կանանց հագուստը, քիչ տարբերութեամբ, նրանք և թուրք կանանց հագուստին: Թէ օտար և թէ տեղացի տղամարդ տեսած ժամանակ, աղջիկները ու պառաւները երեսները չեն ծածկում. ջահիլ հարսները սովորաբար ծածկում են: Կանայի պիտի տեղեր, օրինակ Հաւարկի, ուր բոլոր երեւանք թէ պառաւ և թէ աղջիկ ծածկվում են: Մտաւոր կողմից ողորմելի դրութեան մէջ են. բացի տէրտէրներից ու տիրացուններից կարգաւ, զրկ խնայող համարեալ չը կայ. սրանց կարգաւ էլ Աստուած կարգաւ համարէ...:

Սովորութիւններից աչքի է ընկնում այդ բոլոր գիւղերում նախ՝ նշանագրութեան ժամանակ աղջկայ տիրոջ փեսացուից փող պահանջելը. սովորաբար վերցնում են 50—60—100 ռուբլի: Հարուստ թէ աղքատ պահանջում են այդ վաղեմի սովորութիւնը. մինչև չեն ստանում «յղի փողը» աղջկան պսակ գնալ չեն թողնում: Այդ ստացած փողով աղջկայ հայրը գնում է դանադան իրեղեններ և օժիտի ձևով աղջկան է տալիս:

դնէ մի ապրանք 5 կոպէկով և ծախէ ուրիշին նոյն ապրանքը 10 կոպէկով, կապալ վերանդէ, պայման կապէ,—սակայն պայմանաւորված լաւ ապրանքի փոխարէնը վատը տայ. փող տայ տոկոսով, հարկերն 20, 30, կամ 50-ով, և մեծ տուգանք նշանակէ, կամ թէ գրաւակնով (զակաւոյ) 100 հազարանոց արժողութիւն ունեցող կայքին 5 հազար ռուբլի փող տայ,—ահա այն օրը նա ուրախ էր լինում թէ ինչ մեծ գործ էր գործել, մինչև անգամ ունենում էր համարձակութիւն իրան նմանի առջև պարծենալու: Տեսէք այդ ժամանակը այդ միւսի պատկերին, որը նախանձում էր թէ ինչպէս իր փողը կրկնակի շահ չէ բերում:

Այսօր մեր վաճառականը, ինչպէս ասեցի, զգալիապէս է իր վիճակի մասին, որովհետեւ վերագրեալ հնչող միջոցներից զրկվել է. ճանապարհները բարդացել են, ամեն տեղ տիրապետում է խաղաղութիւն, զօրքի թիւը մեր երկրում պակասել է, լաւ մաքսային հսկողութիւն է լինում այժմ ներմուծող արդիւնների վրա, տեղափոխում փակվել է, և վերջապէս օրէնքները այժմ աւելի ճշգրտեամբ և խստութեամբ են կատարվում:

Մենք վաճառականութիւն ասած բանը չը պիտի հասկանանք: Մօսկվա և ուրիշ տեղեր դնալը, այնտեղից ամեն տեսակ անպէտք ապրանք բերելը, 5 կոպէկով ապրանք առնելը ու 10 կոպէկով նոյն ապրանք ծախելը, և զորս համար մեր երկրից փողեր ուրիշներին տալը,—մի լինում ժամանակ ինքներս մնալով անելանելի վիճակի մէջ, որպէս այսօր շատերը մեզանից մնացած են և էլ չեն մնալու. են վաղը: Դաւանակ է, վերջապէս որ մեր վաճառականներից զուրս գան մարդիկ, որոնք միանաւ ուսումնական մարդկանց հետ, հիմնեն ընկերութիւններ, պտտեն ընական հարստութիւններով օժտված մեր երկրի շուրջը, տեսնեն մեր մեծ մասամբ կուսական դրութեան մէջ մնացած հարուստ հողերը, խմանակ թէ ինչ է երկրի պահանջը, դարգացնեն երկրի մշակութիւնը, գրա-

ւերենն իր կողմից ինքն էլ մի բան աւելացնում է այդ օժիտին:

Թուրքերի մէջ «յղի փողը» աւելի շատ է պահանջվում՝ 100—300 ռուբլ: Նրանք այդ փողի մի մասով իրեղեններ գնելուց յետոյ, միւս մասը մի ապահով անձին են յանձնում, հարսնացուի անուամբ. այս մասին զանազան պայմաններ են տեղի ունենում: Այս սովորութիւնը այն աստիճան անհրաժեշտ կերպարանք է ստացել, որ յաճախ արգելք է դառնում: 25—30 տարեկան երիտասարդի պահանջը: Շատ օրինակների կարելի է պատահել. յաջողվեցաւ ինձ նոյն իսկ խօսել մի քանի 30—35 տարեկան երիտասարդների հետ, որոնք իրանց չամուսնաւոր միակ պատճառը այդ սովորութիւնն են համարում: Բոլորեւնեք, առանձին-առանձին վերցրած, ընդդէմ են այդ սովորութեան—բայց այն ինչ... իրողութիւնը իրողութիւն է:

Սովորութիւն է նաև հարսանիքի կանչը: Փեսայի տանը հաւաքվածներից իւրաքանչիւրը, համապատասխան իր կարողութեան մի բան նուիրում է. բացակայ հրաւիրվածները ուղարկում են: Ամեն մէկի տուածը առանձին-առանձին կանչվելով՝ փեսային է յատկացվում:

Մեռելոցներին կամ արտասովոր ուրախ դեպքերի ժամանակ փողովուրդը, մեծ թէ փոքր, մի տեղ է ձաղում. իւրաքանչիւր մարդ տանից պատրաստի ուտելիք է բերել տալիս:

Մի ուղարկութեան արժանի սովորութիւն ևս. Գեանդակում և Խանաւաղի մէջ մի սովորութիւն կայ, որը միւս գիւղերում գոնէ աննկատելի է: Նոր թաղուածներին երբեմն բարեկամները կամ ազգականները զերկամանից հանում այրում են, աճիւնը քամու տալիս, կամ հանում գլուխը կըտրում՝ ոտները մօտ են դնում և սիրտը մի սուր բան խրում... Այս տեղի է ունենում այն ժա-

ւան դէպքի գործը աշխատանքի և բանտարկեցիկները, զարգացնեն անասնապահութիւնը, շերտապահութիւնը, երկրագործութիւնը, գինեգործութիւնը, բամբակի, ծխախոտի և այլ ցանքերը բաւական շրջել է մեր վաճառականը, լուսաւորեալ երկիրներ է տեսել, ծանօթացել է այնտեղի քաղաքակիրթ կեանքի հետ: Թող մենք ևս փոքրից սկսենք, չլինենք առ այժմ ամենահարկաւոր արդիւնքների գործարարներ, որպէս զի գոնէ ամեն հարկաւոր նիւթեր կարելի չունենանք օտար երկրներից մեզ օտո ներմուծելու:

Ամեն երկրի, ուրիշի և մեր երկրի նպատակը պէտք է լինի այն՝ որ օտար երկրները մեր մէջ աւելի կարելի զգան, քան թէ մենք նրանց մէջ:

Բայց այդ բոլորը կարող է առաջանալ և աշողմէ միմիայն մի ու թե ան ոյժով, ընկ և ր ա կ ց ու թ ե ան ոյժով, զի տ ու թ ե ան ոյժով:

ՊԱՍՏԱԳՐՔԵՐ ԵՒ ՀՐԱՊԱՐԱԿԱՆ ԲԷԿԱՄ

«Արձագանքի» 42-րդ համարում տպւած է մի համեմատական նկատողութիւն կենտրոնական գրաւաճառանոցի հրատարակած՝ Տէր-Գաւթեանի «Русское слово» և Պետերբուրգում հրատարակւած Վ.Օլայէրի «Русская рѣчь» դասագրքերի մասին:

Իբրև մէկը այն ուսուցչներից, որոնք ընդունել են Վ.Օլայէրի դասագրքը՝ մենք իրաւունք ենք համարում, հրապարակօրէն խնդրել «Արձագանքից» շարունակել այդ համեմատութիւնը, որովհետև այն՝ ինչ որ յիշեալ համարում ասուած է, չէ կարող ոչ ոքի համոզել, որ Վ.Օլայէրի դասագրքերը պէտք է հալածվի մեր դպրոցներից:

Ան «Արձագանքի» ամբողջ պատճառաբանութիւնն «Վ.Օլայէր միանգամայն մերժում է մայրենի լեզուի միջամտութիւնը սկզբնական դասաւանդութեան ժամանակ» (առհասարակ չակերտների մէջ բերած խօսքերը «Արձագանքի» խօսքերն են), այնքան ամենքը ընդունում են, որ մասնակը նախ իրան ծանօթ լեզուով պիտի սկսի կարգալ, որը հայերի համար իրանց մայրենի լեզուն է, և յետոյ աստիճանաբար անցնի օտար լեզուին, որ տեղացոց համար ուսուցիչն է: Եւ որովհետև «Արձագանքի» կարծիքով Վ.Օլայէր իր դասագրքերը չստակացրել է բոլոր այն մանուկներին, որոնք մտնում են ուսումնարան և ուսուցիչն իր լեզուի մէջ կենտրոնացնում լինել այն բոլոր կառավարական հաստատութիւնները, որոնցից կախւած են պետական դպրոցները: Այդ դեռ բաւական չէ. նոյն Վ.Օլայէրը (թէ և այս հանգամանքին մենք մի առանձին նշանակութիւն էլ չենք տալիս) առաջին տարւայ սկզբում շատ անգամ է դիմում մայրենի լեզուի օժանդակութեանը: Ուսուցչների համար հրատարակած ձեռնարկի 11-րդ երեսում մենք կարդում ենք՝ «Каж-дое слово я сначала сама переводила на родной языкъ моихъ учениковъ, а потомъ, при повто-реніи того же вопроса, заставляла кого-нибудь изъ учениковъ произносить вслухъ за мною словесный переводъ»:

ցիւներին, որոնք ընդունում են զրա հրատարակութիւնը, և միւս կողմից՝ բէկլամներից հիւսած մի կեղծոտ պսակ Տէր-Գաւթեանի դասագրքի համար:

Առաջարկում ենք երկու հարց. 1) Վ.Օլայէրի նման սկզբնական դպրոցի մի ուսուցիչ կարող է արդեօք իր դասագրքով փոխել կառավար-չական սկզբնական ուսումնարանների կազմակերպութիւնը. և 2) եթէ օրինակ Պենք իբրև ուսուցիչ լեզուի ուսուցիչ՝ ընդունում ենք հայ ծը-խական դպրոցում այս կամ այն դասագրքը՝ մի-թէ դրանով փոխել ենք այդ դպրոցի կազմակերպութիւնը: Մեր նկատողութեան նպա-տակն է պահանջել «Արձագանքի» մանկավարժ-ներից, որ նրանք թող չը տան իրանց հրատա-րակօրէն այդ հարցերին «այո» պատասխանել և այդպիսով առիթ ունենալ կենտրոնական գրաւաճառանոցի հրատարակած «Рус-ское слово»-ին ներքոյն կարգալու:

Վ.Օլայէր իր դասագրքերը ամենին չէ չստակաց-րել բոլոր այն մանուկներին, որոնք մտնում են ուսումնարան և ուսուցիչն իր լեզուի մէջ կենտրոնացնում լինել այն բոլոր կառավարական հաստատութիւնները, որոնցից կախւած են պետական դպրոցները: Այդ դեռ բաւական չէ. նոյն Վ.Օլայէրը (թէ և այս հանգամանքին մենք մի առանձին նշանակութիւն էլ չենք տալիս) առաջին տարւայ սկզբում շատ անգամ է դիմում մայրենի լեզուի օժանդակութեանը: Ուսուցչների համար հրատարակած ձեռ-նարկի 11-րդ երեսում մենք կարդում ենք՝ «Каж-дое слово я сначала сама переводила на родной языкъ моихъ учениковъ, а потомъ, при повто-реніи того же вопроса, заставляла кого-нибудь изъ учениковъ произносить вслухъ за мною словесный переводъ»:

Այնուհետև նվ չը գիտէ, որ մեր ձխական դըպ-

րոցներում ուսուցիչն կարող ալ սկսվում է միայն երկրորդ տարուց. ով չը գիտէ զրա հետ և այն, օրինակ ուսուցիչ լեզուի որ և է ուսուցչի ընդունած այս կամ այն դասագրքից այդ կարգը չէ կարող փոխվել: Բայց «Արձագան-քի» մանկավարժները, ցանկանալով հիմնաւորել իրանց բէկլամները կենտրոնական գրաւաճառա-նոցի հրատարակած «Русское слово»-ի մասին՝ լօգիկայի ամեն օրէնքների հակառակ, գոչում են՝ «մասնակը նախ իրան ծանօթ լեզուով պիտի ըս-կսի կարգալը և այն, կարծես, թէ Վ.Օլայէրի ըն-դունողները արտաքսում են ուսումնարանից հա-յերէնը»:

Վերջապէս միթէ պարզ չէ, որ երբ մի տեսակ դպրոցների համար կազմած մի դասագրքը ըն-դունվում է ուրիշ կազմակերպութեան դպրոցում, այդ դէպքում ինքն ըստ ինքեան տակն ու վրա է լինում և այն հայեցակէտը, որից բխում են դասագրքի մեթօդական շատ ցուցմունքները և մեզ համար ամենին պարտաւորեցուցիչ չէ որո-նել Վ.Օլայէրի արժանաւորութիւնները այն բա-նում, ինչու ինքը Վ.Օլայէրն է տեսնում:

Վ.Օլայէրի պակասութիւնները ցոյց տուց «Ար-ձագանքը»: Բայց մենք հարցնում ենք. ինչո՞ւ է նախապատեւել «Русское слово»-ն Գրքի ներքին արժանաւորութիւնների մասին «Արձագանքը չէ կամենում խօսել, որովհետև այդ կողմից դա-սագրքերը հայ ուսումնարաններին և ուսուցիչնե-րին լաւ յայտնի պիտի լինի» (?) նա բաւակա-նանում է միայն «արտաքին արժանաւորութիւն-ները» թուելով և ստեղծ յօդուածի մի նշանա-ւոր մասում զմայլեցնում է իր ընթերցողներին այն հրաշալիքներով, որոնց կարելի է գոնել.... Ինչ էք կարծում ձեր... «Русское слово»-ի կազ-մի վրա:

Նրկուսից մէկը. կամ ճշմարիտ՝ որ «Русское слово»-ն արժանի չէ աւելի լաւ պաշտպանու-թեան, կամ թէ յիշաւի կան մարդիկ, որոնք հա-տարակական գործերումն էլ բացի աւտարական մատենաներից ըլխող հրահանգներից, ուրիշ ոչ մի սկզբունք չեն ճանաչում....

Ք. Միքայէլեան

ՆԱՄԱԿ ՍԵՎԱՍՏՈՊՈԼԻՑ

Նոյնեմբերի 1-ին

Ղրիմի հարաւային եղբրը վաղուց արդէն իր վրա է դարձրել բժիշկների ուշքը ինչպէս «կու-րորտ» և ինչպէս «բաղէօրտ»: Ամառ և աշունը մանաւանդ աշունը, Ռուսաստանի համարեա ա-մեն քաղաքից, մինչև անդամ և սքանչելի Վով-

ու հառաչանքներ էին արձակում.... Գնալուց մէկը խնդրեց, որ մի համար իրանց բաշխեմ— Ինչ պէտք է անել, հարցրի ես:

—Ար տանը տիրացուին, կը կարդայ, մենք էլ կը լսենք:

Մօտս կային «Մշակի» մի քանի համարները, բոլորը իրանց տուի:

Նրկար կանգնած՝ նայում էին, կարծես չէին հաւատարմ.... վերջապէս մէկը խօսեց. «Մենք ամօթալի ենք մնում քո առաջ, մի այդպիսի բան չունենք, որ մենք էլ քեզ բաշխենք, ինչ անենք»:

—Հատ չնորհալալ եմ, ընդհատեցի ես, ոչինչ չեմ ուղում.... Գուք ինձ մեծ բան բաշխած կը լինէք, եթէ, ինչպէս ձեզ առաջ ասեցի, ցոյց տաք, թէ որտեղ ինչ գորուոր սքեատեղեք կան, ինչ խարաքաներ (աւերակներ) կան....

Այստեղ, մեր գիւղում չը կան, ամա խալաւ-նում մի հին եկեղեցի կայ, շատ հին են ասում: Քեանդակում էլ մի շատ զօրաւոր ակետարան կայ, աւելացրեց երկրորդը. դարմանալի հրաշ-ներ է անում, միզ է ծոնցնում, գծերին խե-լօքացնում է....

Խալաւնում պատահած ժամանակ, տեսայ ե-կեղեցին. ոչինչ յիշատակութիւն չը գտայ. շատ հին է: Աւանդութիւնը ասում է, որ Վաչագան թաղաւորն է չինել տուել:

Քեանդակում Պապ ակետարանի մասին լսեցի նոյն հրաշագործութիւնները Նրկի հրաշագործու-թեան համարակն պիտի վերադրել այն անչափ ուխտագնացութիւնը, որը տեղի է ունենում շըր-ջակայ գիւղերից:

Պատում էին, որ մի պառաւ կին, Աւետարա-նը իր սեղանակաւութիւն համարելով, մի քանի անգամ տարել և երկար ժամանակ տանը պահել է ու արդիւնքը վայելել. հէնց այսօր էլ, երբ Ա-ւետարանը եկեղեցու մէջ է, արդիւնքի վերաբերու-

կապից թէ հիւանդներ և թէ վատաւորը մար-դիկ շտապում են Ղրիմի հարաւային եղբրը, ա-ռաջինները՝ իրանց հիւանդութիւնից ազատվելու, իսկ վերջինները իրանց ոյժերը կազդուրելու: Եւ իրաւ՝ Ղրիմում մենք գտնում ենք այն բոլորը, ինչ որ անհրաժեշտ է թէ առողջին և թէ գըլ-խաւորապէս հիւանդին. մաքուր լեռնածովային օդ, ծովի ջուր և նրա մէջ լողանալը, լեռներ և հովիտներ, համարեա տրօպիկական կանաչեղէննե-րը և բարեխառն եղանակը հազիւ կարելի է գտնել լայնատարած Ռուսաստանի միւս անկիւն-ներում: Հանգամանքների բերմունքով գալով այստեղ, կը կամենայի քանի մի տեղեկութիւններ հաղորդել գլխաւորապէս այստեղի հայոց՝ կեան-քից:

Սկսենք Սեվաստօպօլից, որ անկարելի է չան-ւանել Ղրիմի բանալին:

Սեվաստօպօլ քաղաքը այժմ գեղեցիկ քաղաք կարելի է համարել: Նա չինված է նշանաւոր ծո-ցի եղբրը, լեռան վրա ամֆիթատրոնով: Նը-րանք, որոնք տեսել են կամ կարգացել են Նեա-պօլ քաղաքի մասին, ասում են որ ժամանակով Սեվաստօպօլը երկրորդ Նեապօլ պիտի դառնայ:

Քաղաքի գլխաւոր առուտուրը հացի և աղի արտահանութիւնն է և քարածուխի ներմուծու-թիւնը: Հացը բերում են Սեվաստօպօլ հարաւա-յին նահանգներից և ամբողջ տարւայ ընթաց-քում արտահանում են, որովհետև մինչդեռ ծովը Օդեսայում և ուրիշ նաւահանգիստներում սառ-չում է, Սեվաստօպօլում չէ սառչում: Հացի ա-ռուտուրը, նոյնպէս և աղին և քարածուխը, հրե-աների ձեռքումն է, մանաւանդ հայերն: Մի քա-նի տուն հայեր, որոնք վաղուց արդէն այստեղ բնակութիւն հաստատած են, եկած են Վովկասի դանդաւան քաղաքներից և պարագում են չարիւռ-թիւնով կամ կախիթի դինի և մրգեղէն ծախս-ւով: Միայն մի հայ արհեստաւոր կայ:

Տեղիս միւս հայերը գլխաւորապէս մշակներ են: Սրանք եկած են այստեղ Մուշից, Տիգրանա-կերտից, Ջէյթուտից և Հայաստանի միւս քաղաք-ներից: Հայ մշակների խմբերը «արեւելներ» չեն կաղմում: Մինչդեռ ուսուցիչները, միջոցները, իմէ-րէնները իրանց մշակութիւնը անում են «ար-տելով», ընդհակառակը հայ մշակները առանձին առանձին վարձվում և բանում են: Նրանք զըրկ-ված են ընկերական զգացմունքից. նրանցից իւ-րաքանչիւրը միայնակ կը գնայ նաւապետին կա-ղաչի և աւելի էժան կը վարձվի, զիստելով թէ իրան և թէ իր ընկերներին, թէ միւս «արտելնե-րին», որոնք այդ իսկ պատճառով և չեն սիրում հայ մշակներին:

Ոչ Սեվաստօպօլում, ոչ Եւալուպում հայերը

թեամբ անհաւանակութիւններ միշտ տեղի են ունենում եկեղեցու երեցփոխանի և յիշեալ պա-ռաւի մէջ: Երբեք չը լսուի Աւետարանի ապաւովու-թեան համար միշտ պահապաններ է գնում:

Այդ մաղաղաթեալ ու ծաղկեալու Աւետարանի կաղմը հատարակ է. կաղմի մէջ գրած է՝ «կաղ-մուեցաւ ձեռամբն Վլաս վարդապետի ՌՃԻՁ-ին»:

Աւետարանի վերջի թերթերի վրա կարմիր թա-նաքով գրված է հին ակետարանների վրա սովո-րական բովանդակութեան մի յիշատակարան:

Վերջին երեսի վրա գրված է մի ուրիշ յիշ-ա-տակարան ակետարանի կաղմը պատրաստողի կողմից, որի մէջ է միջին այլոց կան հետեւեալ տողերը. «.... հայրապետութեան էջմիածնի Տէր Գալուրին, և ի կաթողիկոսութեան աղուանից Տէր Սիմէոնին—և Տէր Երեմիային: Նաև ի յառաջնոր-դութեան նահանգիս մերոյ Արանայ Շամախու և Շրուանայ արհեպիսկոպոսին Նիրակոս վարդապե-տին»:

Ոչապրոքեան արժանի է և այն, որ առաջին յիշատակարանի մէջ, համարեա բոլոր բառերի վրա, երբեմն ձայնաւորների գլխին, երբեմն բա-ղաձայնների վրա, խառն ի խառն գրված են ե-րեք կէտեր (....): Մի և նոյն բառի վրա պա-տահում է, որ այդպիսի կէտեր մի քանի անգամ են գրված: Այդպիսի հին գրքերը, որոնք սքեու-թեան նշանակութիւն ունեն գիւղացիների հա-մար, շատ անգամ խաւար նախապաշարմունքնե-րի նիւթ են տալիս: Հատ անգամ էլ դոցանից շատերը կորչում, անհետանում են, թէև, եթէ հաւաքվին, գուցէ պատմական հուշեան թան-գազին նիւթ տալին: Միթէ էջմիածնի գրադա-րանում այլ ևս տեղ չը կայ....:

Ն. Գ.

մանակ, երբ նոր մեռածների ազգականներից կամ բարեկամներից մէկը հիւանդանում է. կամ դա-ռանցանքների մէջ մեռածի անունն է յիշում... Ինչպէս քահանան պատում էր, մի անգամ հօր գիտութեամբ որդուն հանում են ու այրում... Ժողովուրդը յայտնի կերպով այս չէ խոստովա-նում: Քահանան մի քանի անգամ գերեզմանը քանդելու պատահել է ու արգելել: Քեանդակից մի ոմն Թէոս բէկի կինը լսելով որ իր աղջկայ դիակը գերեզմանից հանել վիղը կտրել են խեղա-գարվում է. ինքը թէ Թէոս բէկը և թէ կինը կենդանի են:

Ընդհանուր հիւանդութիւնների ժամանակ սև ձի են անցկացնում նոր գերեզմանների վրայից. այն գերեզմանից որ ձին չէ անցկենում, նշանա-կում է թէ մեռելը կենդանացել է հանում, վիղը կտրում կամ այրում են:

Աղջիկ կնոթեան տալուց, աղջկայ ցանկու-թիւնը յարգվում է. (?) ծնողները աղջկայ ցան-կութիւնը անուղղակի կերպով իմանալուց յետոյ են միայն խօսք տալիս տղատիրոջը: Այս մասին քահանան վկայում էր: Պատահել են և այնպիսի դէպքեր, որ ծնողների կամքի հակառակ աղջիկը իր ընտրած փեսայից չը զրկվելու համար, փա-խել է տղայի հետ:

Այս օրինակ է վարվել նաև Նեմաթապատի քահանայի միակ աղջիկը, որը մի քանի օր իր ընտրածի հետ գիւղից քաջակայելուց յետոյ, ծը-նողների խնդրից համաձայն վերադարձել է. այ-ժմ նա ապրում է իր ամուսնու հետ, հաշտվելով նաև ծնողների հետ....

Բացի Նեմաթապատ գիւղից, ուր ժողովուրդը սովորաբար թուրքերէն է խօսում, միւս գիւղե-րում ընդհանրապէս հայերէն են խօսում, բայց ստատիկ աղաւաղված լեզուով. երբ միմեանց հետ արագ-արագ խօսում են, անկարելի է լինում

հասկանալ: Օրինակ. ձիվի գէօլացուկ, (ձիւն է գալու): Հակելի վրա բիս կայ: (Ուրիշ վրա կանդ-նիր): Հինչստարիւն (ինչ անեմ): Համարելնիւն, համարելնում, համարելում: (Ստանում եմ, ստանում ես, ստանում է): Համարելնում, համարելնում, համարելում: (ստանում ենք...)

Համարելայ, համարելայր, համարելալա... (ստացայ...)

Համարելանք... (Ստացանք...)

«Բիւլըսմ, բիւլըսմ, բիւլըսմ» (բերում եմ...)

«Բիւլիմանք...» (բերում ենք...) «Բիւլմ, բիւլմ, բիւլ» (կը բերեմ...): «Բիւլացուկանք...» (կը բերենք...)

«Բիւլայւմ, բիւլայւմ, բիւլայւմ» (բերելու եմ...): «Բիւլայւնք» (բերելու ենք...): «Գնալիւմ, գնա-լիւմ, գնալիւմ...» (գնում եմ...) և այլն:

Այս գիւղերից թէև իւրաքանչիւր հայ գիւղ ու-նի իր անշուք եկեղեցին, բայց քահանայ չունի. երկու երեք գիւղ մի քահանայ է կառավարում: Խալաւնում բոլորքած պատմում էին, որ եթէ տարի է ոչ իսպն ջուր գցել, ոչ խաղող օրհ-նել: «Նրեխաներս երես խաչ հանել չը գիտեն»— վշտացած աւելացնում էին գիւղացիք....

Այդ գիւղերի հայ ժողովրդը, գոնէ, սիրում է լսել, և առ-երես ամենակերպ համաձայնութիւն է ցոյց տալիս: Նրան անչափ հետաքրքրում են զանազան պատմութիւններ:

Նեմաթապատ գիւղում նստած լրագիր էի կար-դում: Մի քանի մարդիկ մօտ եկան և քաղաքավա-րութեամբ ողջունելուց յետոյ, նստեցին մօտա ու-սկեցին հարց ու փորձ անել թէ ինչ եմ կար-դում, ինչ է դրած: Ես մի բան բարձր ձայնով կարդալուց յետոյ, սկսեցի պատմել առհասա-րակ լրագիրների մասին, թէ ինչի համար են հը-րատարակվում, ինչեր են գրվում, ուղբեր են գը-րում, և այլն և այլն:

Մինչև պատմութեան աւարտելը, նրանք բե-րանները բացած լուռ, միմեանց երեսին նայում

ԲԵՐԼԻՆ, 15 նոյեմբերի Շվեյցարիայի ազգային ժողովի նախագահ Գերտենշտեյն, օպերացիայից յետոյ, վախճանվեց:

Ս. ՊԵՏԵՐԲՈՒՐԳԻ ԲՈՐՍԱ

Նոյեմբերի 15-ին

Լոնդոնի վրա 10 ֆունտ արծե.	97	25
Համբուրգի վրա 100 մարկ . . .	47	75
Փարիզի վրա 100 ֆրանկ	38	25
Ոսկի	7	78
Մաքսային կուպոններ	156	25
Արծաթ	1	18
Բորսային դիվիդենդներ	7	80/0
Պետական 5% տոմս 1-ին շրջանի	98	—
— — — — — 2-րդ	97	75
— — — — — 3-րդ	97	50
— — — — — 4-րդ	97	87
— — — — — 5-րդ	97	35
— — — — — 6-րդ	97	25
Նոր 4% փոխառություն	81	50
Արևելեան 5% փոխառություն 1-ին շրջ.	97	25
— — — — — 2-րդ	97	—
— — — — — 3-րդ	97	87
Ներքին 5% առաջին փոխառություն .	276	50
— — — — — երկրորդ	245	—
5 1/2% ռենտա	101	75
Ոսկեայ ռենտա	177	50
Եօթներորդ կոնսոլիդաց փոխառու-	—	—
թիւն	148	50
Նոր երկաթուղային ռենտա	97	75
5% գրական թղթեր կալուած	—	—
— — — — — փոխ. կրեդ. ընկ. մեծ	—	—
— — — — — թղթագ.	91	37

Գրաւ. թղ. Ազնւ. բանկի	98	—
5 1/2% գրական թղթեր խերսոնի կալուած բանկի	97	75
6% գրական թղ. խարկովի կալ. բան.	100	—
— — — — — Պոլտավայի	99	75
— — — — — Պետ. Տոկոսայ.	100	—
— — — — — Կիեւի	100	25
— — — — — Մոսկւայի	100	25
— — — — — Բեսարաբ. Տավր.	99	50
— — — — — Նիժ. Սամար.	99	50
— — — — — Վիենայի	100	—
— — — — — Թիֆլիսի — 72 և — տ.	—	—
— — — — — Բուխարայի — 18 և — տ.	—	—
Վճարված-կամսկի բանկի ակցիաները	665	—
Ռուսաց երկաթուղիների գլխաւ. ընկ. .	238	—
Ռիբինսկ-Բոլոգոյի ընկ.	84	75
Ս. Պետերբուրգի քաղաքային օրդն-	—	—
գացիաներ	92	25
Մոսկւայի քաղաք. օրդնացիաներ . . .	92	—
Օդէսայի	92	50
Թիֆլիսի քաղաք. կրեդ. ընկ. օրդ. . .	—	—
Ս. Պետերբուրգի բորսայի տրամադրու-	—	—
թիւն հանդարտ է:	—	—

ԽՄԲԱԳՐՈՒԹԱՆ ԿՈՂՄԻՑ

ԱՍԽԱԲԱՒ. Ե. Տ. Ս. Ուղարկեցինք ձեզ ձեր պահանջած Գ. Արծրունու «Эконом. Полож. Турецких Армян» քրոշիկը:

Խմբագիր-հրատարակող ԳՐԻԳՈՐ ԱՐԾՐՈՒՆԻ

Առաջիկայ 1889 թվականի յունվար ամսից սկսուելու է հրատարակուել

“ՄՈՒՐՃ,”

ԳԱՂԱՔԱԿԱՆ—ՀԱՍՏԱՐԱԿԱԿԱՆ—ԳՐԱԿԱՆ

ԱՄՍԱԳԻՐ ՀԵՏԵՒԵԱԼ ԵՐԱԳՐՈՎ.—

1. Բողոքածներ գրական, տնտեսական, իրավական, պատմական և հոգևոր բովանդակությամբ: 2. Բանասիրական՝ վեպեր, պատմություններ, դրամաներ, ոտանավորներ, երգի-ծաղիկներ: 3. Բողոքածներ կովկասեան կենտրոնի հասարակական խնդիրներին: 4. Թղթականություններ ռուսաց տէրութեան և արտասահմանի զանազան տեղերից: 5. Բողոքածներ գիտության զանազան ճիւղերից: 6. Գրականություն և քննադատություն: 7) Հայերէնը այլ և այլ ընկերությունների նիստերի: 8. Փատրոն, երաժշտություն, գեղարվեստ: 9. Ցե-տովներ ներքին և արտաքին քաղաքական անցքերի: 10. Ներքին և արտաքին քրոնիկոն և զանազան լուրեր: 11. Յայտարարություններ:

«ՄՈՒՐՃ»-ի ծաւալը: «ՄՈՒՐՃ» ամսագիրը լինելու է մեծագիր, քառաձառ խորան-շիւր համարը ունենալու է 8-ից մինչև 10 տալգրական թերթ, որ նորին է թէ 128-ից մինչև 160 էրես: Բոլոր 12 համարները կը կազմեն երկու հատոր շուրջ 1,800 էրեսով:

«ՄՈՒՐՃ»-ի բաժանորդները՝ տարեկան 10 ռուբլի, կէս տարեկան՝ 6 ռուբլի կանխիկ վճարելու փոստի ծախքերը կրում է խմբագրությունը: Ուսուցիչների, վարժուհիների և ուսա-նողների համար վճարի վերաբերությամբ զիջում և յետաձգում կը լինի:

«ՄՈՒՐՃ»-ի բաժանորդագրությունը արդէն սկսած է: Խմբագրութիւնը բաց է ամեն օր, առաւ. ժամ 9—1: Խմբագրութիւնը գտնվում է՝ Тифлисе, Гановская ул., домъ Іоан-нисіани, բոլորովին մօտ Երեսնան հրապարակին: Ուրիշ տեղերից դիմում են ուղղակի՝ Тифлисе, въ Редацію журнала «МУРГЪ»:

1—3 Խմբագիր-Հրատարակիչ ԱՆԵՏԻՔ ԱՐԱՍԻԱՆՍԱՆՑ

Յ Ա Յ Տ Ա Ր Ա Ր Ո Ւ Թ Ի Ի Ն Ն Ե Ր

ԼՈՅՍ ՏԵՍԱԻ

Ա. ԹՈՒՄԱՆԵԱՆԻ

«ՀԱԿԱՏԻ ԳՐՈՒՄԲԵՐ ԶԻ ԶՆՋՈՒԻԼ»

Ժողովրդական գրոյց

Գինը 40 կ.

Մտնվում է հայ գրականագիտությունում և Շուշի պ. Գ. Բաչարեանի մօտ (Шуша, Кевогъ Агафоновичъ Кочарьянцъ)

1—1

BATEAUX A VAPEUR FRANCAIS N. PAQUET ET COM.

ՅԻՐԱՆՍԻԱԿԱՆ ՆԱԻԱԳՆԱՑՈՒԹԵԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ

Ն. ՊԱԿԵ ԵՒ ԸՆԿ.

Կանոնաւոր և ուղղակի երթևեկութիւն ՄԱՐՍԵԻԼ և ԲԱՌՈՒՄԻ մէջ և փոխադարձ. Հինգշաբթի, նոյեմբերի 24-ին, ԱՆԱՏՈԼԻԱ (ANATOLIE) շոգենաւը, նաւապետ ԲՕՇԵԼ (BOSCHEL) ղուրս կը գնայ Բաթումից դէպի Տրապիզոն, Օրդու, Սամսոն, Կ. Պոլիս և Մարսէյ: Տեղեկութիւնների մասին պէտք է դիմել ընկերութեան գործակալներին. Բաթումում Լէմբոլուի տան, Նաբերէժնայա, և Թիֆլիսում՝ Նախիկի Ար-ժրունի գալերէում, Ձճ 103.

1—2 (2. հ. ե.)

Բացված է 1889 թվականի բաժանորդագրությունը

Ա Ղ Բ Ի Ի Ր

ՄԱՍՄՍԵԱՑ ՊԱՏԿԵՐԱԶԱՐԻ ՀԱՆԴԻՍԻ

Եօթներորդ տարի

Կը հրատարակվի նոյն ուղղութեամբ և նոյն աշխատակիցների մասնակցութեամբ: Եթէ առա-ջիկայ 1889 թվականին «Աղբիւր» բաժանորդների թիւը հասնէ 3,000-ի, բ. մասը կը հրատարակվի նոյն չափով, որքան ա. մասն է: Առաջին պրէմիան է մի գեղեցիկ օւշոգրաֆիա՝ «ԱՐՇԱԼՈՅՍ», ան-ցեալ տարվայ պրէմիայի կրկնապատիկ մեծութեամբ: Ստացված են արդէն 3,000 օրինակ, բաժա-նորդ գրուողը հէնց խնդն կը ստանայ ա. պրէմիան, որ թէ Թիֆլիսում և թէ հայաբնակ քաղաքնե-րում մեր գործակալների մօտ դրված են ի ցոյց հասարակութեան: Բ. պրէմիան՝ մեր տաղանդաւոր նկարիչ Գ. Բաշինջադեանի «Արարատ» մեծագիր պատկերը (անկի մեծ քան «Աղբիւր»-ի ծովա-կը), վիճակ կը գցվի մեր բաժանորդների մէջ սեպտեմբեր ամսին «Արարատ» տանող բաժանորդը կի՛նէ կամենայ՝ կարող է նրա փոխարէն ստանալ 100 ռ: Գ. պրէմիան՝ Պատի օրացոյց 1890 թ-ի, կուղարկվի բաժանորդներին զեկտեմբերի 15-ի հետ: Բացի դրանից՝ տարվայ ընթացքում կառաջարկ-վեն հանելուկներ և ընթերցան, որոնց առաջին վճարողները կը ստանան մրցանակներ—գրքեր, պատ-կերներ, ալբոմներ, գրասենեակի զարդեր և այլն:

Բովանդակութիւն: Մասն առաջին I) Վէպեր, մանրամէպեր, դրոյցներ, առակներ, հէքիաթ-ներ, ճանապարհորդութիւններ, կենսագրութիւններ II) Բանաստեղծութիւններ: III) Գիտութիւն և արուեստ: IV) Նոր լուրեր: V) Այլ և այլք: Զ ու ա Ր Ճ ա Ղ Ե. VI) Մանկական ֆրեթելեան, չախ-մատի և այլ խաղեր: Դերուներ, թուարանական խնդիրներ: Անեկդոտներ, հանելուկներ, շոտասե-լուկներ VII) Երգեր՝ ձայնագրած (նօտաներով): Մասն երկրորդ. VIII) Կրթութեան և դաստիարա-կութեան վերաբերեալ յօդուածներ և տեղեկութիւններ IX) Ուսանողութիւններ, խորհուրդներ X) Մատենախօսութիւն և նոր գրքեր XI) Խառն լուրեր XII) Պատասխաններ: Յայտարարութիւններ:

«Աղբիւր» տարեկան բաժանորդագիրը 3 ռ. է, պրէմիաների ծրարի համար պէտք է ուղար-կել 4 հոտ 7 կ. մարկներ: Ապառիկ ոչոքից չէ ընդունվում:

Հասցեն՝ Тифлисе, Редація «Агбуръ», իսկ արտասահմանից՝ Тифли (Caucase) Rédaction de la Revue «AGBUR»:

Խմբագիր-Հրատարակիչ ՏԻԳՐԱՆ ՆԱԶԱՐԵԱՆՑ

ՀԱՅՈՒՆԿԱԴԱՐԱՆ			
Թ Ի Ֆ Լ Ի Ս Ի Ա Ռ Ե Ի Տ Ր Ա Կ Ա Ն Բ Ա Ն Կ Ի			
ց1-ն Նոյեմբերի 1888			
Պ Ա Հ Ա Ն Զ Ք	Թիֆլիսում	Բազուի բաժն.	Ընդամենը
1. Դրամարկ (առ.ձեռն թղթագրամ).....	26,571—68	47,536—67	74,108—35
2. Ընթացիկ հաշիւ Պետական Բանկ. բաժնում.	2,509—74	210,000 —	212,509—74
3. Զեղջումն (Disconto) մուրհակաց երկու ստորագրութեամբ.....	2,749,343—11	872,413—86	3,621,756—97
4. Զեղջումն մուրհակաց մէկ ստորագրութեամբ, ապահոված ապրանքներով.....	— —	— —	— —
5. Զեղջումն տոկոսաբեր թղթ., կտրօն. և այլն.	33,313—87	6,142—50	39,456—37
6. Փոխառութիւն գրականութիւնով՝ ա) Պետութիւնից ապահ. տոկոսաբ. թղթերի. բ) — — — — — ոչ ապահ. — — — — — գ) ապրանքների — — — — — դ) Ոսկւոյ և արծաթի — — — — —	997,066—47 186,964 — — — — —	232,830 — 7,645 — 70,160 — 17,090 —	1,229,896—47 194,609 — 70,160 — 17,090 —
7. Բանկի պատկանեալ տոկոսաբեր թղթեր.	338,203—88	24,368—05	362,571—93
8. Ոսկի և արծաթաստանի փոխանակադրեր.,	31,316—52	1,882—55	33,199—07
9. Թղթակիցներ՝ ա) Նոցա հաշիւը (Loro)..... բ) Բանկայի հաշիւը (Nostro).....	4,817,364—16 7,938,181—30	— — — —	4,817,364—16 7,938,181—30
0. Բաժնի հաշիւը կենտրոն. վարչութեան հետ. կենտրոն. վարչութեան հաշիւը բաժնի հետ.	874,848—23 — —	— — 71,800—25	874,848—23 71,800—25
1. Բողոքուած մուրհակներ.....	— —	— —	— —
2. Պայմանաժամը անցուցուած փոխառութիւններ.....	11,860 —	4,160 —	16,020 —
3. Ընթացիկ ծախսեր.....	37,637—28	12,340—67	49,977—95
4. Կանկարասիք և սկզբնական ծախսեր.....	3,461—51	3,009—77	6,471—28
5. Յետ ստացուելիք ծախսեր.....	12,806—75	1,622—79	14,429—54
Բ. Ա.	18,061,448—50	1,583,002—11	19,644,450—61

Պ Ա Ր Տ Ք	Թիֆլիսում	Բազուի բաժն.	Ընդամենը
1. Հինգական դրամագրու.....	1,000,000 —	— —	1,000,000 —
2. Պահեստի դրամագրու.....	154,474—72	— —	154,474—72
3. Դրամական աւանդներ՝ ա) Պայմանաժամով բ) ԳՊահանջ..... գ) Ընթացիկ հաշուով հասարակ..... դ) — — — — — պայմանաւոր.....	1,741,507 — 230,572 — 742,600—46 — —	114,939 — 13,400 — 381,687—77 96,937—60	1,856,446 — 243,972 — 1,124,288—23 96,937—60
4. Զեղջումն մուրհակաց պետական բանկայի թիֆլիսի բաժնում.....	323,866—20	— —	323,866—20
5. Մասնաւոր ընթացիկ հաշիւ պետական բանկայի թիֆլիսի բաժնում, ապահոված մուրհակներով և տոկոսաբեր թղթերով.	612,400 —	— —	612,400 —
6. Թղթակիցներ՝ ա) Նոցա հաշիւը (Loro)..... բ) Բանկայի հաշիւը (Nostro).....	4,514,566 — 8,288,782—33	— — — —	4,514,566 — 8,288,782—33
7. Բաժնի հաշիւը կենտրոն. վարչութիւն. հետ.. կենտրոն. վարչութիւն. հաշիւը բաժնի հետ.. 8. Բանկայի բաժնետոմսերու անվճար կտրօնների բաշիւր 1882, 83, 84, 85, 86 և 87 թ. 9. 2 րձարուած տոկոսներ, աւանդներու, ընթացիկ հաշիւներու և այլ գործողութեանց.....	115,594—93 — — 5,941—71 67,641—23	— — 870,235—64 — — 15,612—36	115,594—93 870,235—64 5,941—71 83,253—59
10. Ստացուած տոկոսներ և յանձնարարականներ.....	191,831—43	83,451—44	275,282—87
11. Փոխանցիկ գումարներ.....	71,670—49	6,738—30	78,408—79
Բ. Ա.	18,061,448—50	1,583,002—11	19,644,450—61